

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

ՄԱՐԿՆԵՐԸ

Նորահայտ վավերագրեր Կարինում Ռոստոմի և հայ բարեգործական ընկերությունների 1916 թ. գործունեության վերաբերյալ*

1916 թ. փետրվարի 3-ին ռուսական Կովկասյան բանակի զորամասերը դժվարին մարտերից հետո գրավեցին Էրզրում (Կարին) ամրոցը և քաղաքը՝ ծանր պարտության մատնելով թուրքական զորքերին: Քաղաքն ազատագրած ռուսական բանակի և հայ կամավորականների առջև բացվեցին մեկ տարի առաջ տեղի ունեցած մեծ ողբերգության սահմնեցուցիչ տեսարանները: Նրանցից մեկը՝ հնչակյան գործիչ, հետագայում նշանավոր խորհրդային զորավար Հայկ Բժշկյանցը (Գայ) 1916 թ. մարտին Կարինից գրում էր. «Հայոց թաղերը թափուր են ու անմարդաբնակ - չորս կողմը կողոպտած ու ամայացած խանութներ, տներ և այդպես անվերջ»¹: Հայկական թաղամասերի տներից մեկի պատի վրա գրված էր. «26 մայիս, սկստ կործանումը»²:

Քաղաքի ազատագրումից անմիջապես հետո Հայ առաքելական եկեղեցին, բարեգործական և հասարակական ընկերությունները սկսեցին քայլեր ձեռնարկել Կարինի և նահանգի ողջ մնացած հայ բնակչությանն օգնելու համար: Կարինում իրենց գործունեությունը ծավալեցին չորս կազմակերպություններ՝ Համառուսաստանյան քաղաքների միության Կովկասի բաժանմունքը, Կովկասի Հայոց բարեգործական ընկերությունը (ԿՀԲԸ), Կարինի հայ փախստականների կոմիտեն և Մոսկվայի հայկական կոմիտեն³:

Իբրև Համառուսաստանյան քաղաքների միության Կովկասի բաժանմունքի լիազոր՝ առաջիններից մեկը Կարին է ժամանում Ռոստոմը (Ստեփան Ջորյան), որի նախորդ գործունեությունը ամբողջովին կապված էր Բարձր Հայքի մայրաքաղաքի հետ: 1916 թ. նոյեմբերից Կարինում էր գտնվում նաև Ամենայն Հայոց կաթողիկոսի ներկայացուցիչ Չավեն վարդապետը⁴:

Մինչ պատերազմը Կարինում բնակվող մոտ 18 հազար հայերից (ըստ այլ տվյալի՝ 25 հազար⁵) մնացել էր ընդամենը 59 հոգի: Նրանց թաքցրել էին մի քանի թուրք ընտանիքներ, իսկ 18 աղջիկ ապաստան էր գտել տեղի ամերիկյան միսիոներական առաքելությունում⁶: Ըստ մեկ այլ տվյալի՝ ողջ մնացածների թիվը հասնում էր մոտ 150-ի, որոնց ճնշող մեծամասնությունը կանայք և երեխաներ էին⁷:

Այդ ամենից հետո, թեև քայլեր էին ձեռնարկվում ողջ մնացած բնակչությանը Կարին վերադարձնելու համար, սակայն Կովկասյան I-ին բանակային կորպուսի հրամանատար, գեներալ Պ. Կալիտինը կտրականապես արգելում է հայերի մուտքը քաղաք: Դրա մասին էր վկայում Կարինի պարետ նշանակված գեղապետ (հետագա-

ՌԸ Կարին, թիվ 4 (32) հոկտեմբեր-դեկտեմբեր 2010

ՎԵՄ համահայկական համոզմունք

* Ընդունվել է տպագրության 24.09.2010:

1 «Գաղափար», Թիֆլիս, 18 մարտի 1916, N 14:

2 Նոյն տեղում, 13 մարտի 1916, N 12:

3 Տե՛ս «Армянский вестник», Москва, 22 января 1917г., N 1, с. 17.

4 Տե՛ս ՉԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 536, թ. 31:

5 Տե՛ս «Վան-Տոսպ», 28 փետրուարի 1916, N 14, էջ 14:

6 Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 4 մարտի 1916, N 49:

7 Տե՛ս ՉԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 56, թ. 39:

յում՝ գեներալ) Մովսես Սիլիկովը (Սիլիկյան)⁸:

Ու թեև 1916 թ. փետրվարի 11-ին Խորեն եպիսկոպոս Վարդապարյանին ուղղված Երևանի պարետի գրությունում տեղեկացվում էր, որ բանակային հրամանատարությունը հայերին թույլ է տվել հետ վերադառնալ⁹ և նույնիսկ տրվել են 21 անցաթղթեր՝ Կարին ուղևորվելու համար¹⁰, սակայն փետրվարի 26-ին դրան հետևում է Կովկասյան բանակի գեներալ-կվարտիրմեյստեր (թիկունքի պետ), գեներալ Ս. Վ. Տոմիլինի հեռագիրը Երևանի թեմի առաջնորդ Խորեն Մուրադբեկյանին¹¹ այն մասին, որ բանակի հրամանատարությունը նպատակահարմար չի գտնում մասնավոր անձանց թույլատրել գնալ Կարին¹²:

Ավելին, Կարինում ու նրա շրջակայքում ռուսական իշխանությունները սկսել էին նվաճված տարածքների ռուսացման քաղաքականություն: Հայ զինվորական հովիվ Ռուբեն ավագ քահանա Բեկզուլյանը 1916 թ. նոյեմբերի 1-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ին ուղղված գեկուցագրում հայտնում էր, որ ի թիվս մի շարք այլ հայկական եկեղեցիների. «Կարինի մօտ գտնող Իլիճայ աանի հայոց եկեղեցին զինվորական իշխանության հրամանով ձևափոխել է ուղղափառ եկեղեցու»¹³:

Թուրքական իշխանությունները չէին վնասել Կարինի Ս. Աստվածածին մայր եկեղեցին, քանի որ այնտեղ էին կենտրոնացրել քաղաքի հայերից բռնագրավված գույքը: Չէր վնասվել նաև նշանավոր Սանասարյան վարժարանի շենքը, ուստի Ռոստոմը քայլեր էր ձեռնարկում, որպեսզի կրկին իրեն վստահվի վարժարանի տնօրինությունը¹⁴:

Անհրաժեշտ էր նաև շտապ լուծել թուրքական իշխանությունների կողմից հայերից բռնագրավված և Ս. Աստվածածին եկեղեցում պահվող գույքի խնդիրը: Առաջինն այդ մասին բարձրաձայնել էր գնդապետ Ս. Սիլիկյանը՝ Ալ. Խատիսյանին ուղղված հեռագրում: Այս կապակցությամբ ԿՀԲԸ նախագահ Սամսոն Հարությունյանը 1916 թ. փետրվարի 23-ին դիմում է Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ին՝ խնդրելով աջակցել Ս. Աստվածածին եկեղեցում պահվող և մի քանի միլիոն գնահատվող գույքի պատկանելության հարցը լուծելու գործում¹⁵:

Նման ոչ բարենպաստ պայմաններում Ռոստոմին այնուամենայնիվ հաջողվում է հաղթահարել վերը նշված արգելքները, իրականացնել որոնողական աշխատանքներ և նույնիսկ փորձել հայերին վերադարձնել Ս. Աստվածածին եկեղեցում գտնվող գույքը: Նշված իրերը թուրքական իշխանությունները բռնագրավել էին բռնագաղթից առաջ, ուստի Վրաստանի և Իմերեթի հայոց թեմակալ առաջնորդ, եպիսկոպոս Մեսրոպ մագիստրոս Տեր-Մովսիսյանին (1865-1939) ուղղված հեռագրում Ռոստոմը հայտնում էր. «1) Այսօր սկսեցի բաժանել տերերին հայոց եկեղեցում պահած ապրանքները: 2) Ուղարկեցինք 300 փախստականներ, կան 200, գալիս են նորերը: Խնդրում ենք հեռագրով փոխադրել Քաղաքների Միության միջոցով 2000 ռ[ուբլի]»¹⁶:

8 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 10, թ. 12:

9 ՀԱԱ, ֆ. 50, ց. 1, գ. 123, թ. 11:

10 Տե՛ս Նույն տեղում, թ. 11-12:

11 Խորեն Մուրադբեկյան (Տփղիսեցի),- 1932-1938թթ. Ամենայն Հայոց կաթողիկոս: Այդ տարիներին նա Երևանի թեմի առաջնորդն էր և Երևանի «Եղբայրական օգնության» հանձնաժողովի նախագահը:

12 ՀԱԱ, ֆ. 50, ց. 1, գ. 123, թ. 26:

13 Սահակյան Ռ. Օ., Ռուբեն ավագ քահանա Բեկզուլյանի նամակները Արևմտյան Հայաստանում ռուսական իշխանությունների քաղաքականության մասին, «Լրաբեր հասարակական գիտությունների», N3, 2009, էջ 300:

14 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 56, թ. 40 շրջ.:

15 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1296, թ. 7:

16 «Հորիզոն», Թիֆլիս, 7 օգոստոսի 1916, N 175:

Ռոստոմը կարողանում է որոնողական աշխատանքների շնորհիվ գտնել ևս 131 հայ որբեր և նրանց տեղափոխել Ալաշկերտ: Իր հեռագրում նա հայտնում էր, որ ԽՆուսում կան 50 որբեր ու բացի այդ սպասվում են ևս 150 երեխաներ¹⁷:

Կարինում Քաղաքների միության կողմից բացվում է սննդակայան, որից կարող էին օգտվել 1200 հոգի: Իսկ Կարինի հայ փախստականների կոմիտեն հիմնում է որբանոց՝ 100 որբերի համար և զբաղվում փախստականների բնակության հարցերով: Գործում էր նաև վերապատվելի Հարող Բաքստոնի անվան անգլիական որբանոցը, որտեղ որբերի թիվը սկզբում 50¹⁸ էր, ապա՝ 100¹⁹: 1916 թ. գարնանը Հարող Բաքստոնը Կովկաս էր ժամանել իր գործընկերներով, որոնք եղել էին Էրզրումի, Վանի շրջաններում ու Պարսկաստանում²⁰: Վերջինիս աջակցության շնորհիվ Էրզրումում բացված որբանոցը կոչվում էր «Բքստոնյան»: Հ. Բաքստոնի խմբի անդամներն էին՝ մեկ բժիշկ, երկու գթության քույր և գաղթականական գործի երկու կազմակերպիչ²¹:

Գտնվելով Կարինում, Ռոստոմը աշխատում էր օգտագործել ցանկացած հնարավորություն՝ գաղթականներին աշխատանքով ապահովելու համար: 1916 թ. սեպտեմբերի 24-ին Կովկասում փախստականների խնդիրներով զբաղվող գեներալ Վ. Մ. Թամանշևիկն ուղղված դիմումում ԿՀԲԸ նախագահ Ս. Հարությունյանը խնդրում էր օժանդակել Կարինում բրդի մշակման արհեստանոց հիմնելու համար, որովհետև Ռոստոմը հնարավորություն ունի էժան գնով գնել 400 փոթ բուրդ: Դա թույլ կտա անգործ կանանց ընդգրկել վերը նշված արհեստանոցում և ապահովել աշխատանքով²²:

Մոսկվայի Հայկական կոմիտեն Կարինում հիմնել էր երեք ապաստարան, դեղատուն և բժշկական օգնություն էր ցուցաբերում մերձակա գյուղերի բնակիչներին: 1916 թ. հոկտեմբերի 20-ի դրությամբ Մոսկվայի հայկական կոմիտեի հիվանդանոցում բուժվել են 579, իսկ 3409 հոգի ստացել են ամբուլատոր բուժում: Կոմիտեն կազմակերպել էր նաև շրջիկ բժշկական խումբ՝ բաղկացած բժշկից և բուժակից: Չնայած դրան, նշված ժանակահատվածի ընթացքում մահանում են 54 որբեր²³:

Սակայն ամենացավալին այն էր, որ ռուսական զինվորական իշխանությունը հովանավորում էր քաղաքում մնացած թուրք բնակչությանը: Օգտվելով նման վերաբերմունքից, վերջիններս նույնիսկ հանդգնում էին բռնագաղթած հայերի տները վարձով տալ ռուս զինվորականներին²⁴: Այս կապակցությամբ «Հորիզոն»-ի թղթակիցը հաղորդում էր. «Էրզրումի և թե շրջակայ գիւղերի թիւրքերը բոլորը ազատ ներս ու դուրս են անում քաղաքի պարիսպների դռներով, իսկ հայ մարդկանցից պահանջում են մի որևէ վկայական, որ թոյլ տան այդ դռներով անցնել» և արձանագրում, որ «Էրզրումի թիւրքերը սայլերով դարձնալ կրում են հայ գիւղերից իրենց համար ձմռան այրելու աթար և փայտեր, դռներ, պատուհանի փեղկեր, երկաթներ, վերջապէս ինչ որ ճարտում է: Հայերի արտերը հասել են, բայց թոյլ չի տրուում ձմռան պաշարը հոգալու»²⁵:

17 Տե՛ս «Գաղափար», 27 մայիսի 1916, N 41:
18 Տե՛ս «Յանքալաբեր», 30 հոկտեմբերի 1916, N 44, էջ 1391:
19 Տե՛ս ՅԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 536, թ. 19:
20 Տե՛ս «Վան-Տոսպ», 26 յունիսի 1916, N 31, էջ 14:
21 Տե՛ս Տերոյան Վ., Իմպերիալիստական ծիծեռնակներ. Միսիոներաբարեգործական կազմակերպությունների աշխատանքը Մերձավոր Արևելքում և Անդրկովկասում, առաջաբանը և ծանոթագրությունները Ռ. Օ. Սահակյանի, Ե., 2008, էջ 12:
22 Տե՛ս ՅԱԱ, ֆ. 1168, ց. 1, գ. 324, թ. 54:
23 Տե՛ս “Армянский вестник”, Москва, 22 января 1917г., N 1, с. 17.
24 Տե՛ս ՅԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 536, թ. 11 շրջ.:
25 «Հորիզոն», 30 մարտի 1916, N 71:

1916 թ. փետրվարի 23-ին Ազգային բյուրոյին ներկայացրած զեկույցում Հայկական կենտրոնական կոմիտեի անդամ Հովսեփ Խոնունցը տեղեկացրել է մեկ այլ ցավալի փաստի մասին: Կարինը գրոհող ռուսական զորքի կազմում եղել է հայ հետախույզներից և ուղեկցողներից կազմված խումբ: Նրանք ռուսական հրամանատարությանն անգնահատելի օգնություն են ցույց տալիս, որը, սակայն, չի գնահատվում: Կարինը գրավելուց հետո հայ հետախույզներին «առաջարկվում» է երեք օրում լքել քաղաքը, քանի որ չեն հանդիսանում կանոնավոր բանակի զինծառայողներ²⁶:

«Ռուսական խոսք» («Русское слово») թերթի թղթակից Ֆ. Սիրիսկին նույնպես նկատել էր նման «տարօրինակ» վերաբերմունքը. «Հայ խանութներ գրեթե չը կան, որովհետև հայերը մի քանի պատճառներով չեն կարողացել խանութ բանալ և Կարինը, որ մինչև պատերազմը թիրքահայկական քաղաք էր և նոյնիսկ, գուցե ավելի հայկական, այժմ դարձել է գուտ թիրքական»։ Նա նշում էր, որ Կարինի թուրքերից կազմվել է «յատուկ ոստիկանութիւն, և մինչև անգամ նրանց նշանագետների և գօտիների վրայ գրուած է ոչ թէ ռուսերէն, այլ արաբերէն (օսմաներէն-Ռ.Ս.)»²⁷: Թղթակիցը հավանաբար չէր համարձակվել իր թղթակցությունում արձանագրել, որ հայերին արգելված էր խանութներ բացել և առևտրով զբաղվել: Նրանց «խորհուրդ էր տրվել» խանութը բացել տեղացի թուրքերից մեկի անունով, իսկ իրենք կարող են այնտեղ աշխատել որպես սովորական վաճառող²⁸:

Առանձին ազդեցիկ հայ անհատներ ևս փորձում էին օգտակար լինել իրենց հայրենակիցներին և գալով Կարին՝ օժանդակել նրանց: Այսպես՝ բժիշկ Յակով Չավրիևի (Հակոբ Չավրյան) ջանքերով Կարինի ռուսական իշխանությունները վերադարձնում են քաղաքի «Երիտասարդական միությանը» պատկանող տպագրական մեքենան²⁹:

Որբերի հայտնաբերման աշխատանքների շարունակումը խիստ անհրաժեշտ էր, քանի որ տեղեկություններ էին ստացվել, որ ծնողագուրկ հայ երեխաներին տանում են Ռուսաստան: Ախալքալաքի գավառի Սուլտա գյուղի բնակիչ Ջարմայր Եղոյանի վկայությամբ. «Սարիղամիշի երկաթուղու կայարանում տեսայ երկու զինուոր, որոնց մօտ գտնում էին 18 հոգի հայ որբեր 6-10 տարեկան: Որբերը բերուած էին Էրզրումի նահանգի թիրք բնակիչների մօտից և ռուս սպաների յանձնարարութեամբ յիշեալ երկու զինուորները պիտի տանէին Ռուսաստան սպաների տնեցոց մօտ ապրելու իբրև հոգեզուակ»³⁰:

Որբերի և փրկվածների հայտնաբերման աշխատանքները շարունակելով ճակատին ավելի մոտ գտնվող Երզնկայում, Ռուստոմը հեռագրում է Համառուսաստանյան քաղաքների միության Կովկասի մասնաճյուղի գլխավոր լիազոր, Թիֆլիսի քաղաքագլուխ Ալ. Խատիսյանին՝ շտապ դեղորայք, պարեն ուղարկելու անհրաժեշտության մասին: Այստեղ փրկվածների թիվը հասնում էր չորս հազարի³¹: Ողջ մնացածները գլխավորապես ապաստանել էին Դերսիմում, որի բնակիչներն իրենց վերաբերմունքով արմատապես տարբերվում էին քրդական ցեղախմբերից:

26 Տե՛ս ԳԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 56, թ. 39 շրջ.:

27 «Համբարաբեր», 16 հոկտեմբերի 1916, N 42, էջ 1327:

28 Տե՛ս ԳԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 56, թ. 39 շրջ.:

29 Տե՛ս «Հորիզոն», 15 սեպտեմբերի 1916, N 205:

30 «Համբարաբեր», 30 հոկտեմբերի 1916, N 44, էջ 1391:

31 Տե՛ս «Հորիզոն», 8 սեպտեմբերի 1916, N 201:

Ըստ այլ տվյալների՝ Երզնկայում և Գերսիմում գտնվող հայերի թիվը հասնում է մոտ վեց հազարի³²: Երզնկայի գրավումից 15 օր անց՝ 1916 թ. հունիսին, քաղաք է ժամանում Մոսկվայի Հայկական կոմիտեի թռուցիկ ջոկատը, որը պետք է բժշկական օգնություն ցուցաբերեր տեղի բնակչությանը: Գերված հայերի որոնման համար կազմակերպվում է հատուկ ջոկատ, որը ազդեցիկ քուրդ բեկերի միջնորդությամբ սկսում է որոնման աշխատանքները: Քրդերը համապատասխան գումարի դիմաց լեռներից տեղափոխում էին հայերին և հանձնում կոմիտեի անդամներին: Առավել դժվար էր թուրքերի մոտ բռնի պահվող հայերի որոնումը: 1916 թ. հունիսի 24-ից մինչև հոկտեմբերի 1-ը հաջողվում է հայտնաբերել և ազատել 4671 հոգու, որոնցից մոտ 450-ը 4-ից 12 տարեկան որբեր էին³³:

Մոսկվայի Հայկական կոմիտեն Երզնկայում բացում է 25 մահճակալանոց հիվանդանոց և կազմակերպում ամբուլատոր ընդունելություն: Բացվում է նաև սննդակայան, ուր 1916թ. հունիսի 25-ից ճաշ էին ստանում 500, իսկ սեպտեմբերի 18-ից՝ 1200 հոգի³⁴:

1917 թ. փետրվարի դրությամբ Կարինում և շրջանում բնակվում էր 3345 հայ: Նրանք ապրում էին խոնավ, կիսաքանդ տներում, կիսամերկ և թերսնված: Բնակչությանն օգնելու նպատակով Կարինում գործող կազմակերպությունները կոչով դիմում են ինչպես հայ, այնպես էլ ռուս հասարակությանը: 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո էլ, չնայած ստեղծված ծանր պայմաններին և փորձություններին, հայկական կազմակերպությունները շարունակում էին աշխատանքները Էրզրումի նահանգում: 1917թ. հունիսի դրությամբ Կարինի օկրուգում արդեն բնակվում էր 10500 հոգի, որոնցից 6250-ը՝ կանայք և երեխաներ, իսկ 3800-ը՝ աշխատունակ տղամարդիկ³⁵:

Ստորև ներկայացվող փաստաթղթերը տպագրվում են առաջին անգամ, ուղղագրական և կետադրական որոշ շտկումներով, սակայն ոճը պահպանելով: Փաստաթղթերը վերնագրել ենք մենք: Բոլոր ընդգծումները փաստաթղթինն են: Բնագրերը պահվում են Հայաստանի ազգային արխիվում:

Ռուբեն Օ. Սահակյան
պատմ. գիտ. թեկնածու

Ռ (Ը) ԳԱՐԻ, թիվ 4 (32) հոկտեմբեր-դեկտեմբեր 2010

THE PROBLEM OF RECONSTRUCTION OF WESTERN ARMENIA IN 1915-1917

Newly Brought to Light Documents on the Activities Carried out by Rostom and Armenian Beneficial Companies in Karin in 1916

Ruben O. Sahakyan

32 Տե՛ս ՅԱԱ, ֆ. 503, ց. 1, գ. 69, թ. 25:
33 Տե՛ս “Армянский вестник”, 22 января 1917г., N 1, с. 16.
34 Տե՛ս նույն տեղում, էջ 17:
35 Տե՛ս ՅԱԱ, ֆ. 654, ց. 1, գ. 17, թ. 54:

ՎԵՄ համահայկական հանդես

N 1

**ՌՈՍՏՈՍԻՆ ԵՄԱՆՎԵ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ՍԱՄՍՈՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ-
ՅԱՆԻՆ՝ ԼՐԱՅՈՒՅԻՉ ԳՐԱՄ
ՀԱՅԹԱՅԹԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

30 օգոստոսի 1916 թ.

Երզնկա

Սիրելի Սամսոն³⁶

Երբք չպիտի ներեմ չեզ, որ ինչ 1000
ր[ուբլ]-ով ճանապարհ արիք և ինչ, որ ըն-
դունեցի և հանգիստ սրբով ճանապարհ ընկալ:

Այստեղ ստիպում եղայ 3000 ր[ուբլի]
պարտք վերցնել մի կապալառու հայից: Նրա
անունն է Վաղարշակ Քիշմիշեան, ընկերոջ
անունը Արքաշէտ: Տուի նրանց ստացական, որ
ներկայացնին Թիֆլիզում քեզ կամ
սրբազանին³⁷: Չգիտեմ, թե ինչ գումարներից
պետք է վճարեք, Կենդրոնականի³⁸, թե
Չախտուշեանի³⁹ հանգանակությունից: Դա
այդտեղի գործն է, միայն թե խնդրեմ չուշացնեք:

Ինչպես տեսնում եմ, ծախսերը հետզհետե
աւելանալու են: Պետք է առնազը այստեղ
պատրաստ ունենալ 10000 ր[ուբլի]:
Անհրաժեշտ եմ համարում նոյն իսկ մի քիչ
աւելի ծախսել, միայն թե շատ մարդ ազատի,
եթե ոչ՝ ճանապարհները շուտով կը փակվին:

Մի քանի ընտանիքներ կան, որոնք
հարուստ անդամներ ունին դուրսը: Փոքրիկ
փոխառություն կարելի է անել դրանց, վստահ
լինելով, որ փոխարենը կը վճարի: Շատերը

ազգականներ ունին Ամերիկայում: Պատրաս-
տում ենք այդպիսիների ցանկը՝ Ամերիկա հեռ-
ագրելու համար:

Ռոստոմ]

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 536, թ. 22-23:

Բնագիր: Չհռագիր:

N 2

**ԿԱՐԻՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՄԱՆՎԵ
ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԵՑ ԳՈՐԾՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ՝ ԿԱՐԻՆՈՒՄ,
ԵՐԶՆԿԱՅՈՒՄ ԵՎ ԱՅԼ ՎԱՅՐԵՐՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ
ՑՈՒՅՑ ՏՐՎՈՂ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Հայկական Կենդրոնական Կոմիտեին

Յարգելի Հայրենակիցներ

13 սեպտեմբերի 1916 թ.

Էրզրում

Ասկէ առաջ պարբերաբար Ձեզ տեղեկու-
թիւններ տւած էինք Էրզրումի ու շրջանի
գաղթականներու դրութեան մասին, այժմ
ռուսական զորքի յառաջխաղացումով գրաւե-
ցան Երզնկան, Բաբերդը, Քիլիս, Դեռջանը ու
բնականաբար աւելացաւ գաղթականներու թիւը:

Ինչպես Ձեզ յայտնի է, մեր օգնութեան
միջոցները շատ սուղ են, չունինք կառա-
վարական միջոցներ, ինչպես նաև Կենդրո-
նական Մարմիններից այդ ուղղութեամբ ոչ մի
օգնութիւն ցոյց չտրուցաւ մինչև հիմա,
հակառակ այս բոլորին մեր ձեռքի տակ եղած
միջոցներով ինչպես նաև Քաղաքների Միու-

³⁶ Հարությունյան Սամսոն (1875-1941).- հասարակական-քաղաքական գործիչ, Կովկասի Հայոց բարեգործական ընկերության նախագահ, Հայ ժողովրդական կուսակցության ղեկավարներից: 1918-1919 թթ. ՀՀ արդարադատության նախարար:

³⁷ Եկատի ունի Կրաստանի և Իմերեթի հայոց թեմակալ առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանին:
³⁸ Փախստականներին և կամավորներին օգնություն կազմակերպելու նպատակով, Կովկասի Հայոց բարեգործական ընկերությունը 1914 թ. սեպտեմբերի 14-ին Թիֆլիսում կայացած համագումարում ընտրում է Հայկական կենտրոնական կոմիտե բաղկացած 24 անդամից: Կոմիտեի անդամներն էին՝ Կրաստանի և Իմերեթի թեմի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը (պատվավոր նախագահ), Սամսոն Հարությունյանը (նախագահ), Ալ. Խատիսյանը, Հովս. Խուրմուցը, Ա. Մելիք-Ազարյանը և ուրիշներ: Ռուսական իշխանությունների կողմից պաշտոնապես ճանաչվել է 1915 թ. օգոստոսի 30-ին և ներկայացուցիչ ուներ Ներքին գործերի նախարարությունում՝ հանձնի Պետական դումայի անդամ Մ. Աճեմյանի:

³⁹ Չախտուշյան Գրիգոր (1861-1931).- հայ հասարակական գործիչ, պատմաբան և իրավաբան: Աշխատությունների մեծ մասը նվիրված է Հայկական հարցին և հայերի զանգվածային կոտորածներին: Ակտիվ մասնակցություն է ունեցել հայ կամավորական շարժմանը և գաղթականների համար օգնություն կազմակերպելու աշխատանքներին: 1919-1920 թթ. եղել է ՀՀ գլխավոր հյուպատոսը Դոնի Ռոստովում: 1920 թ. մայիսին գլխավորել է Հայ անկուսակցականների միության ձևավորումը, ընտրվել է նրա վարչության նախագահ:

քեան կողմէ ցոյց տրած օգնութեան շնորհիւ կարելի եղաւ մի կերպ օգնութիւն փութացնել մեր դժբախտ հայրենակիցներուն:

Այսօր Ձեզ կըտանք ընդհանուր պատկերը Էրզրումի և Երզնկայի շրջաններու գաղթականական գործին:

Երզնկա.-Պրն. Ռոստոմը Կովկասից վերադառնալուց մի երկու օր յետոյ մեկնեց Երզնկա, ուր մնաց քսան օրի չափ, իր տած տեղեկութիւններն հետեւեալներն են:

Երզնկայի մէջ այժմ կայ 3000-ի չափ գաղթականութիւն մը, բաղկացած տղամարդկանցից, կանանցից և երեխաներից: Ասոնց մեծամասնութիւնը ապաստանած էր Տերսիմի քրդերի մօտ, որը պէտք է ասել, սկզբից մինչև այսօր ցոյց տած են լաւ ընդունելութիւն: Շնորհիւ այդ աջակցութեան, բաւական թով տղամարդիկ ազատած են *Խարթերոյի, Միգրէի, Չնշկածազի* և այլ շրջաններէն:

Ամէն օր շարունակ կուզան տասնեակներով քրդերի առաջնորդութեամբ, որոնք լաւ կերպով կը վարձատրին: Ազատածներու պատմածին համաձայն, դեռ եւս շատ թով փախստականներ կան Տերսիմի մէջ: Մեր ուժերի ներած չափով կաշխատենք ձմեռը չհասած, որքան կարելի է շատ թով գաղթականներ ազատել, որովհետև մի քսան օր յետոյ, վերահաս ձմեռան շնորհիւ Տերսիմի լեռները անանցանելի կը լինեն, և հետեւաբար փոխադրութեան ոչ մի միջոց հնարաւոր չի լիներ:

Փախստականները գրեթէ մերկ, անօթի վիճակի մէջ կուզան, որոնց հարկ եղած անմիջական օգնութիւն ցոյց կը տրուի: Կենսական մթերքներ շատ հեշտութեամբ կարելի կը լինի ճարել, եթէ երբեք դրամ ունենալին:

Այսօր Երզնկա մեկնեցաւ Մոսկվայի Հայկական կոմիտէի կողմէ կազմակերպած Բժշկա-Սննդական խումբը՝ բժ[իշկ] Արշակ Տեր Պողոսեանի ղեկավարութեամբ: Կօմիտէն 250 ձեռք ներքնազգեստ ուղարկեց գաղթականներին բաժանելու հ[ա]մ[ա]ր: Մի քանի օրից մեկնի գուցէ Քաղաքների Միութեան փոխադրական խումբը՝ բեռնաւորած կենսական մթերքներով:

Էրզրում.- Մինչև այսօր բնիկ կարճեցի և զանազան վայրերից եկած գաղթականներու

ընդհ[անուր] թիւն է՝ 1304-հետեւեալ կերպով՝ տղամարդիկ՝ 573, կանայք՝ 503, երեխաներ՝ 5-16 տարեկան՝ 192, երեխաներ՝ 1-15 տարեկան՝ 36:

Իսկ դաշտի գիւղերի *Մուրուրկա, Հինձք, Չիրոզ, Հանուրում, Ըղրաչոր, Օձնի, Չիֆթլիկ* և այլք գիւղերի մէջ տեղաւորած կան 1522 անձ, հետեւեալ կերպով՝ տղամարդ՝ 1002, կին՝ 446, 1-5 տարեկան երեխաներ՝ 74:

Քրիի և Մամախաթունի շրջանի *Շէն, Ղամլար, Չիլնոց, Չուզուլ, Կօթեր, Սարրկայա, Աղաթեր, Ասարանք, Չանախչի, Թարի, Ծաղկարի և Քրի* քաղաքի ու գիւղերու մէջ տեղաւորած կան 1800 անձ:

Քաբերդ.- Քաբերդի շրջանից ազատած են մօտաւորապէս 500 անձ, որոնց 400-ը կը գտնուի շրջանի գիւղերը, իսկ 100-ը՝ քաղաքը: Այստեղ ալ մինչև այժմ ալ ոչ մի օգնութիւն չի հասած: Յորեն կարելի կլինի ճարել շատ էժան գներով: Կօմիտէն որոշած է շուտով ուղարկել մի ներկայացուցիչ, որը պիտի զբաղուի շրջանի գործերով:

Կարնոյ դաշտի, Քրիի, Մամախաթունի շրջանի գիւղացիները կզբաղվին երկրագործութեամբ և կը քաղին մի մասը հայերի այն արտերի, որ ցանած են թուրքերը և որոնք նահանջի ատեն թողել ու հեռացել են:

Ներկայացնելով Ձեզ մօտաւոր պատկերը շրջանիս գաղթականական գործին, յոյս ունիմք, որ ի նկատի առնելով շրջանիս բազմապիսի պահանջները, հարկ եղած շուտափոյթ օգնութիւններ կը հասցնէք:

Մնամք Յարգանոյ՝ ի դիմաց Կարնոյ Հայկական կօմիտէի

Ատենապետ [ազգանունը բացակայում է] Քարտուղար [ազգանունն ընթերցելի չէ]

կնիք՝ «Կարնոյ հայ փախստականների կոմիտէ: Эрзерумский комитет по презрению армян беженцев:

ՀԱՄ, ֆ. 28, ց. 1, գ. 536, ք. 32-32^ա:

Բնագիր: Ձեռագիր:

ՎԱՎԵՂԱԳՐԵՐ

Բ (Ը) ԳՐԱԻՆ, ԲԻՎ 4 (32) ԽՈՒԿՆԵՐԵՐ-ՂԵԿՆԵՐԵՐ 2010

ՎԵՄ ԽԱՆԱԿԱԿԱՎԱՆ ԽԱՆՈՒՄ

N 3.

**ԿԱՐԻՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱՍՏԿԸ
ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԻՑ ԳՈՐԾՈՂ
ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ
ԳՐԱՄԵՎ ՀԱԳՈՒՍՏ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Հայկական Կենդրոնական Կօմիտէին

ի Թիֆլիս

Յարգելի Հայրենակիցներ

26 սեպտեմբերի 1916 թ.

Էրզրում

Կը հաստատենք մեր 12 թակիր տեղեկագիրը: Այսօր կստանաք մի քանի տեղեկութիւններ մեր շրջանի գաղթականական գործի մասին:

Ինչպէս գրել ենք, տեղւոյն գաղթականների սննդի հոգսը ստանձնած է Քաղաքների միութիւնը, բաց անելով մի սննդակայան, բայց հետզհետէ մթերքները կը թանգանան, մասնատրապէս հացը, որ այս վերջերս գրեթէ չի ճարւիր, այնպէս որ գաղթականները ստիպւած են պատահաւոր կերակուցուիլ իրենց օրերը: Այս առթիւ անհրաժեշտ կը նկատենք, որ Կովկասից որոշ քանակութեամբ ալիւր հասցնէք, ապա եթէ ոչ շուտով մենք մեզ անտանելի դրութեան առաջ կը գտնուինք: Միւս կողմէ կօմիտէս ուղարկեց մարդիկ հեռատու գաւառները մթերք հաւաքելու: Յոյս ունինք Դերջանի շրջանից բաւական քանակութեամբ ցորեն հայթայթելու: Մեկ երկու ամիս առաջ, եթէ բաւականաչափ փող ունենայինք մեր ձեռքին՝ շատ հեշտութեամբ կը կարողանայինք այդ պէտքը լրացնել, այնպէս որ այժմ երևի դժարութիւններու պիտի հանդիպենք մեր ներկայացուցիչները, նոյնպէս և գնի մասին՝ ինչ գնով որ կարելի կը լինէր ձեռք բերել սրանից մի քանի ամիս առաջ, այսօր անլի թանք պիտի կարողանանք գնել: Բայց և այնպէս կարիքի անհրաժեշտութիւնը աչքի առաջ ունենալով, մենք գնի մասին երկրորդական նշանակութիւն պիտի տանք:

Գաղթականները, որ կուզան *Երզնկայից ու այլ շրջաններից, գրեթէ մերկ վիճակի մէջ կը գտնուին: Այս առթիւ կօմիտէս սկսաւ բաժանել հայոց եկեղեցուց վերցրած սպարանքները: Մինչև այսօր բաժանւած է (630) ձեռք զգեստացու՝ 400-ը կանացի, իսկ 230-ը՝ երեխաների: Բայց տաք հագուստի կարիքը խիստ զգալի է, մանաւանդ, որ Էրզրումի ձմեռը շատ խիստ լինելուն, շուտով սկսելուն պատճառով այդ պակասը սուր կերպարանք պիտի առնի: Էրզրումի մէջ փաթ հագուստը բնաւ չի ճարւիր, հետևաբար պէտք է հայթայթել Կովկասից: Պիտի խնդրուինք Կ[ենտրոնական] Կօմիտէիդ, որ մասնատու ուշադրութեան առարկայ դարձնէր այս կէտքը, և օր առաջ դրական կերպով կարգադրեր հարկ եղածը, որկերով բաւականաչափ փաթ հագուստը:*

Վերջերս հասան գաղթականները՝ տեղատրելու հ[ա]մ[ա]ր բաւական մեծ դժարութիւններու հանդիպեցանք: Սրանից մի քանի շաբաթ առաջ կարգադրութիւն եղաւ, որ այն թուրքերը, որոնք կը բնակին հայերու տների մէջ՝ դուրս հանին: Մի քանի օրան մէջ դատարկեցան մի շարք տներ, բայց յետոյ մեզի անյայտ պատճառներով երկրորդ կարգադրութիւն եղաւ, որ մնան: Այնպէս որ ներկայիս հնարատու չի համարի թուրքերին հանել:

Նորեկ նաչալնիկը [պետը] խոստացաւ խօսել հրամանատարի հետ և հեռագրել Պէշկովին⁴⁰: Այժմ կսպասինք այդ դիմումի արդիւնքին, մինչ այդ մի շարք գաղթականներ մնացած են գրեթէ դուրսը: Հետևաբար բնակարանի չգոյութիւնը ու սննդի անբաւարարութիւնը պատճառ դարձած են հիւանդութեանց ծաւալելուն: Բարեբախտաբար վարակիչ հիւանդութիւնները մուտք չեն գտած գաղթականաց մէջ:

Տղամարդկանց աշխատանքի կազմակերպումով ենք զբաղւած, բայց այդ աշխատանքը շատ դանդաղ կերպով յառաջ կը գնայ, վասն զի հնարատրութիւն չունինք գոնէ մի քանի օրով անոնց կուշտ ուտացնելու և տաք հագուստ տալու: Այնուամենայնիւ ամեն օր քիչ քիչ կը

⁴⁰ Պէշկով Նիկոլայ Նիկոլայի (1857-?),-ռուսական բանակի գեներալ: 1916 թ. հուլիսին նշանակվել է պատերազմական օրենքներով թուրքիայից գրավված Արևմտյան Հայաստանի (Թուրքահայաստանի) և այլ շրջանների գեներալ-նահանգապետ:

տեղատրեմք զանազան աշխատանքներու մէջ:

Ինչպէս Չեր, նոյնպէս էլ մեր ցանկութիւնն է Էրզրումի և այլ վայրերու մէջ բանալ պահեստներ: Այդ գործի կազմակերպման հ[ա] մ[ա]ր անհրաժեշտ է ունենալ սեփական *Տրանսպորտ*՝ լինի այդ Կ[ենտրոնական] Կօմիտէի կողմից, լինի Քաղաք[ների] Միութեան փախստականների մասի կողմից:

Ծախսեր կան, որ կընկնի տեղական կօմիտէի վրայ, հետևաբար պէտք է որոշ գումար յատկացնել այդ ուղղութեամբ, կը կարծէնք, որ Կ[ենտրոնական] Կօմիտէի ընդառաջ կը գնայ մեր այս պահանջին:

Ամէն օր Տէրսիմից Երզնկա կը գան նորանոր գաղթականներ՝ քրդերի առաջնորդութեամբ: Այսօր Երզնկայից հեռագիր ստացանք, որ մի օրայ մէջ 75 և 110 փախըստականներ եկած են Երզնկա: Հետգհետ է այդ գաղթականները կը տեղափոխուին Էրզրում: Մեկտեմբերի 14-ից մինչև այսօր Էրզրում են հասած 684 անձ և 112 որբ, որոնք յանձնուած են Մոսկվայի Հայկ[ական] Կօմիտէին: Նոր ճանապարհիւ էլ են 52 հոգի: Առաջին կարաւանը, որ կը բաղկանար 424 հոգուց, հետևեալ շրջաններից են.

Խարբերդի շրջաններն	24 հոգի
Խօզարէ -,-	17 -,-
Չարսամճաքի -,-	130 -,-
Բաբերդէ -,-	10 -,-
<hr/>	
[Ընդամենը]	243 [հոգի]
Չմշկածագի շրջանէն	111 հոգի
Բէյրիի -,-	53 -,-
Տրապիզոնի -,-	24 -,-
Շ[ապին] Գարահիսարի -,-	11 -,-
Չանազան շրջաններն	44 -,-

	243 [հոգի]
Ընդի[անուր] գումար	424 [հոգի]

Յաջորդիւ կը տեղեկագրէնք Չեզ նոր եկածներու ցանկը և որ շրջանէն լինելը: Նոր հասած գաղթականներից մի հարիւր հոգի

տեղատրած ենք *Դաշդի* գիւղերը: Կը խորհիմք նոյնպէս գաղթականների մէծ մասը բնակեցնել Դաշտի գիւղերը:

Մնամ Յարգանօք՝ Կարնոյ Հայ փախստականների Կօմիտէի ատենապետ՝ Գ. [Պեզեյան] [ստորագրություն] կնիք՝ «Կարնոյ հայ փախստականների կոմիտէ: Զրչерумский комитет по презрению армян беженцев:

Սակագրություններ՝ «Ստ[ացվել է] 1917 թ. հոկտեմբերի 3-ին, N 495»: [Մեկ մակագրություն ընթեռնելի չէ]:

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 536, ք. 34-35:

Բնագիր: Չեռագիր:

N 4.

ՈՍՏՏՈՍԻ ՆԱՄԱԿԸ ԿՀԲԸ ՆԱԽԱԳԱՀ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆՆԻ ԿԱՐԻՆԻ ՈՐԲԱՆՈՅԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԳԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Միլեյի Սամսոն
29 հոկտեմբերի 1916 թ.

Սարիղամիշ

Կէս ճանապարհից նորից գնում են Կարին *բժշկի հեյր*⁴¹, մի քանի օրից վերադառնալու յոյսով:

Բերանացի բաւական ունին հաղորդելու, առայժմ ուզում են գրել որբանոցի խնդրի համար:

Մինչև իմ Կարին հասնելը, գոյութիւն ունեն միայն մի որբանոց (բացի Մոսկվայի կոմիտէի որբանոցներից) անգլիականի անունով, *Կենդրոնական որբանոցը* դեռ նոր է սկսել, գլխատրապէս շէնքերի անյարմարութեան պատճառով:

Եթե ուզում ես, պարտասար են որբանոցը դիւրին ներկայացնել Կենդրոնականի անուն և նորից սկսել անգլիականը, որի համար աւելի դիւրին է շէնք պահանջել: Դ-ա կազատի, ի միջի

⁴¹ Սկստի ունի մասնագիտությամբ բժիշկ Յակով (Յակոբ) Ջավրիկին (Ջավրյան),-1866-1920): Յայ քաղաքական և պետական գործիչ, ՅՅԳ անդամ: 1912-1914թթ. ակտիվ մասնակցություն է ունեցել հայկական բարենորոգումների իրականացման աշխատանքներին: Սկզբնապես եղել է Յայկական II, ապա I կամավորական խմբերի բժիշկը: Կամավորական խմբերի լուծարումից հետո ակտիվ մասնակցություն է ունեցել Էրզրումի և նահանգի գաղթական հայ բնակչության տեղավորման և օգնության գործում: 1917թ. ժամանակավոր կառավարության կողմից նշանակվել է Արևմտյան Յայաստանի գլխավոր կոմիսար, գեներալ Պ. Ի. Ավերյանովի (1867-1937) օգնական քաղաքացիական հարցերի գծով: 1918թ. ՅՅ կառավարության կողմից կազմված պատվիրակության կազմում Մոսկվայում վարել է բանակցություններ խորհրդային կառավարության հետ: 1918 թ. հուլիսին ձերբակալվել է, որից հետո նրան թույլատրվել է աշխատել հիվանդանոցում, որտեղ վարակվել է բժավոր տիֆով և մահացել:

այլոց և անհրաժեշտութիւնից ղօկումէնտները վերափոխելու: Գօկումէնտները սնանկարի են՝ կառավարութեան ներկայացնել այդ ձևով չի կարելի:

Եթէ համաձայն են՝ հեռագրիր, որ այնտեղ եղած ժամանակը վերջնականապէս կարգադրենք խնդիրը:

Ռոստ[ոմ]
[ստորագրութիւն]
Մակագրութիւն. «Ընդունել... [ընթեռնելի չէ]»:

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 536, ք. 21-22:

Բնագիր: Չհռագիր:

N 5.

**ԿԱՐԻՆՈՒՄ ՀԻՄՆՎԱԾ ԱՆԳԼԻԱԿԱՆ
(ԲԱՔՏԱՌՅԱՆ) ՈՐԲԱՆՈՅԻ ՏՆՕՐԵՆ
Լ. ԼԱՆԻՍԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ ԿՀԲԸ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆ
ԲԱՅՎՈՂ ՈՐԲԱՆՈՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Առաջարկներ Կարնոյ Ազգային որ-
բանոցներու խնդրի շուրջ Թիֆլիսի Հայկ[ակամ]
Կեդրոնական Կոմիտէին

2 դեկտեմբերի 1916 թ.

Էրզրում

Պատ[վարժան] Կոմիտէիդ ծանօթ է, որ Կարնոյ մէջ նոր բացուելիք որբանոցի շուրջ խորհրդակցութիւններ ընելու, նախահաշիւ ներկայացնելու եկայ, բայց այստեղ լսելով, որ Պրքսընէան որբանոցը արդէն յանձնուած է Կոմիտէիդ խնամակալութեանը, նպատակա-
յարմար դատեցի հետեւեալ առաջարկները բերել ժողովիդ հաստատութեան:

Այժմ Պրքստընէան որբանոցի մէջ կան 151 որբ-որբուհիներ, որոնցմէ 50-ը ստիպուած ըլլանք շուտով նոր որբանոցի մը մէջ փո-
խադրել, քանի որ նախաձեռնող անգլիացի-
ները իրաւունք չեն տար մէջ [որբանոցում] 100 որբերէ աւելի պահել:

Նոր որբանոց մը բանալն ալ, այժմու պայմաններու պատճառով դժուար է և նիւթական մեծ գոհողութեան կարօտ, և յետոյ նոր որբանոց մը բանալու համար ոչինչ չպիտի կարենանք ըլլալ, եթէ Պրքսընի որբանոցէն 50 որբեր ընդունենք:

Ռոստի կառաջարկիմ.

Պահել Պրքսընէան որբանոցն իր այժմու

շէնքին մէջ, և այնտեղ գտնուող որբերու թիւը աւելցնել 50 նորերով: Ուրեմն, որպէսզի Պրքսընի որբանոցի մէջ կարելի ըլլայ 200 որբեր պահել, պէտք է այդ 50 նորերուն սնունդի, հագուստեղէնի հայթայթման համար, այժմս որբանոցի պիտուէին վրայ աւելցնել 9000 ռ[ուբլի] (ինը հազար ռուպլի):

Որպէսզի հնարատրութիւն ունենանք Պրքսընէան շէնքի մէջ 200 որբեր պահել, պէտք է վերանորոգել և լսարանի վերածել նոյն շէնքի բակին մէջ գտնուող մեծ սրահը, ուր կարելի է ազատ կերպով 170-200-ի չափ աշա- կերտներ ընդունել: Այդ պահանջուած նորոգու- թիւնը իրագործելու համար անհրաժեշտ է՝ 3000 ռուպլի	
Լսարանական կ[ա]ն[խա]	
տրման համար	1000 -,-
Վառելիքայայթի և լուսատրութ[յան] [համար]	1200 -,-

Միանագ 5200 -,-

Այս նորոգութիւնը ընելով կարելի պիտի ըլլայ ո՛չ միայն որբանոցի մէջ գտնուող 5 տա-
րեկանէն վեր (մօտ 150) որբերը կրթել, այլ և Կարնոյ հայ բնակչութեան երեխաներէն 50 չափ աշակերտներ ընդունիլ. պահելով ուսուց-
չական այժմու կազմը և կամ անհրաժեշտու-
թեան պարագային հրափրել նոր ուսուցիչ մը:
Ուրեմն Կ[ենտրոնական] Կոմիտէին տրամա-
դրելով նոր ընդունելիք որբերու սնունդի և հագուստեղէնի համար

9000 ռ[ուբլի]

Լսարանի վերանորոգութեան,
կահատրման, վառելիքայայթի
Չնախատեսուած ծախքերու
համար

5200 ռ[ուբլի]

1500 ռ[ուբլի]

Գումարը

15700 ռ[ուբլի]

Կոմիտէն Կարնոյ մէջ կունենայ որբանոց մը 200 որբ-որբուհիներով և դպրոց մը 200 աշակերտներով, որոնց 50-ը բնակչութեան երեխաներէն:

Տնօրէն Կարնոյ Պրքսընէան Որբանոցի՝
Լ[ևոն] Լանիս [ստորագրութիւն]

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 536, ք. 19 և շրջ.:

Բնագիր: Չհռագիր:

ՎԵՐՋ